ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Ե ր և ա ն, Ա ր գ ի շ տ ի 1

№ 1296-Ա « 10 » ապրիլի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի Հ.2805-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով ըստ օրենքի 12.09.2024 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 06.03.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1.Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունիսի 29-ի «Երևանի Շրջանային փողոցի հ.68/1 բնակելի տան և հողամասի նկատմամբ Սեյրան Լիպարիտի Մեհրաբյանի իրավունքները վերականգնելու, 185.16քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» հ.2805-Ա որոշման /այսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Որոշումը լրացնել նոր՝ 1.1 կետով, հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024 թվականի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան Շրջանային փողոցի հ.68/1 հասցեի հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:».

2) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 3-րդ և 8-րդ կետերում՝ «Սեյրան Լիպարիտի Մեհրաբյանի» բառերը փոխարինել «Լիպարիտ Սեյրանի Մեհրաբյանի» բառերով.

3) Որոշման նախաբանում «Սեյրան Լիպարիտի Մեհրաբյանի (ծնված 01.12.1968 թվականի)» բառերը փոխարինել «Լիպարիտ Սեյրանի Մեհրաբյանի (ծնված 22.08.1997 թվականի)» բառերով.

4) Որոշման վերնագրում, 2-րդ կետում՝ «185.16» թիվը փոխարինել «184.26» թվով.

5) Որոշման նախաբանում, 1-ին կետում՝ «485.16» թվերը փոխարինել «484.26» թվերով.

6) Որոշման 3-րդ կետում՝ «Երևանի քաղաքապետի խորհրդական Հ.Մուրադյանին» բառերը փոխարինել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ